

Նույն սեռի հանդեպ հակվածություն

Հոկտեմբերի 25, 2016

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

Հետևյալ կայքի ամենուրեքողման թեմաներից. topics.lds.org

Նույն սեռի հանդեպ հակվածությունը վերաբերում է նույն սեռի անձի հանդեպ առկա հուզական, ֆիզիկական, ռոմանտիկ կամ սեռական հրապուրանքին: Նույն սեռի հանդեպ հակվածությունը նույն կերպ չի արտահայտվում բոլորի մոտ: Ոմանք հակվածություն են զգում բացառապես նույն սեռի հանդեպ, մինչդեռ մյուսները կարող են հակվածություն զգալ թե՛ մեկ, թե՛ մյուս սեռի հանդեպ:

Եկեղեցին տարբերություն է դնում նույն սեռի հանդեպ հակվածություն ունենալու և համասեռամոլ վարքագծի միջև: Նույն սեռի հանդեպ հակվածություն ունեցող կամ իրենց նույնասեռական, լեսբուի կամ երկսեռական համարող մարդիկ կարող են Աստծո հետ ուխտեր կապել ու պահել և լիարժեք ու արժանի մասնակցություն ունենալ Եկեղեցում: Նույնասեռական, լեսբուի կամ երկսեռական համարվելը կամ նույն սեռի հանդեպ հակվածություն զգալը մեղք չէ և ինքնին չի արգելում, որ մարդը արժանի մասնակցություն ունենա Եկեղեցում, կոչում կրի կամ այցելի տաճար:

Սեռական անարատությունը Աստծո ծրագրի էական մասն է մեր երջանկության համար: Սեռական հարաբերությունները վերապահված են տղամարդու և կնոջ համար, որոնք ամուսնացած են և խոստանում են մինչև վերջ հավատարիմ մնալ միմյանց: Չամուսնացած տղամարդու և կնոջ, կամ նույն սեռի մարդկանց միջև սեռական հարաբերությունը մեղք է և խախտում է մեր Երկնային Հոր կարևորագույն օրենքներից մեկը և խոչընդոտում է հավերժական առաջընթացի մեր ճանապարհը: Ապաշխարությունը և Աստծո հետ հաշտությունը հնարավոր է սեռական ցանկացած կողմնորոշում ունեցող մարդու համար, ով խախտել է մաքրաբարոյության օրենքը: Որպես Քրիստոսի հետևորդներ, մենք դիմակայում ենք անբարո վարքին և ջանում ենք նմանվել Նրան: Մենք ձգտում ենք Մուրբ Հոգու առաջնորդությանը և Փրկիչի օգնությանը, ով գիտի ինչպես սատարել մեզ, երբ գայթակղվում ենք (տես Ա Կորնթացիս 10.13, Վևու 62.1): Եթե տեղի ենք տվել սեռական գայթակղություններին և խախտել ենք մաքրաբարոյության օրենքը, մենք կարող ենք ապաշխարել, ներվել և վերադառնալ Եկեղեցու լիակատար անդամակցությանը:

Մենք կարող ենք ճշգրիտ չիմանալ, թե ինչու են որոշ մարդիկ հակվածություն զգում նույն սեռի մարդկանց հանդեպ, բայց ոմանց համար այն բարդ իրողություն է և մարդկային կյանքի փորձության մասն է: Փրկիչ Հիսուս Քրիստոսը կատարյալ պատկերացում ունի այս Երկրի վրա մեր ունեցած յուրաքանչյուր մարտահրավերի մասին և մենք կարող ենք դիմել Նրան մխիթարության, ուրախության, հույսի և ուղղորդության համար (տես Ավմա 7.11–12): Անկախ նրանից, թե ինչ փորձություններով ենք անցնում կյանքում, մենք բոլորս Աստծո զավակներ ենք՝ արժանի միմյանց բարությանը և կարեկցանքին (Հռովմայեցիս 8.16–17): Ստեղծելով բարենպաստ միջավայր, մենք միմյանց հանդեպ գթության և կարեկցանքի հիմքն ենք դնում և շահում ենք մեր համակցված հեռանկարներից և հավատքից: